

Մատաղի հանդիսութիւնն հետեւեալ տեղեր եւ օրեր կը կատարուի.

1. Վերափոխման օրն՝ ի Հաճկատար: 2. Գեկտեմբեր 29 ին, այն է՝ Ս. Յակոբայ տօնին՝ Ս. Խաչ եկեղեցին, հիւանդութիւններէ ազատ մնալու նպատակաւ: 3. Ս. Աւքսենտի օրն ի Զամբա, 1827 էն ի վեր կը կատարուի իբրեւ ուրախութեան հանդէս մը, ի յիշատակ այն օրւան՝ երբ Ս. Աւքսենտ եկեղեցին, զոր մինչեւ այն ատեն տէրութիւնն իբրեւ ռազմավթերանոց կը գործածէր, իրենց ետ տրուեցաւ: 4. Վերափոխման առաջին Վիւրակէն՝ ի Վուրա-Հոմորուլուի, եւ 5. Յովակիմայ եւ Աննայի տօնին, Փռունդուլ ընտանեաց կողմանէ, ի Հաճկատար:

Հայք չորեքշաբթի եւ ուրբաթ պահք կը պահեն. եւ բաց ասկէ՝ ունին նաեւ հետեւեալ պահքերը, որ մէկ տարւոյ մէջ 189 օր կամ 27 ամբողջ շաբաթ ըսել է:

1. Եօթնօրեայ պահք Քրիստոսի ծննդենէն յառաջ (Ծնունդի պաս):

2. Եօթնշաբաթեայ պահք նախ քան զԶատիկ (Մեծ պաս): (Հոս մտադիր կ'ընենք՝ որ Ծննդեան եւ Զատիկի նախատօնակներուն¹⁵, իբրիկուան ժամը 7 ին մօտ պատարագ մատուցուելէն ետեւ, — մինչեւ այս ատեն ամբողջ օրն ո՛չ բան մը կ'ուտուի եւ ո՛չ կը խմուի — կը դադրի օրւան պահքը, այս կը կոչուի Ճրագաւոր¹⁶):

3. Եօթնօրեայ պահք Այլակերպութենէ (Վարդաւառ) յառաջ (Յովակիմայ պաս):